**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

---

# Հ Ր Ա Մ Ա Ն

«12» դեկտեմբերի 2024թ. N 26-Լ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 120-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասը, «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 30-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել.
   1) Լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների օրինակելի ձևերը՝ համաձայն N 1 Հավելվածի,
   2) Մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը՝ համաձայն N 2 Հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն ու շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և լրացման կարգերը հաստատելու մասին» N 120-Ն հրամանը:
3. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2025 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

12.12.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության
կոմիտեի նախագահի

2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 26-Ն

հրամանի

# ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում է քաղաքաշինական փաստաթղթերի կազմում, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, շինարարություն, շինարարության որակի տեխնիկական հսկողություն, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում իրականացնող լիցենզավորված անձանց և քաղաքաշինական գործունեության թույլտվություն ստացած օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման հիմնական պահանջներն ու օրինակելի ձևերը:

2. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կամ քաղաքաշինության գործունեության թույլտվություն ստացած սուբյեկտները հաշվետվությունները լիցենզավորող մարմին են ներկայացնում էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական հարթակի միջոցով (էլ. հասցե urban.e-gov.am):

3. Հաշվետվությունների ներկայացման օր է համարվում էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:

4. Սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված օրինակելի ձևերին համապատասխան հաշվետվությունները լիցենզավորող մարմին են ներկայացվում տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

5. Լիցենզավորող մարմին ներկայացված հաշվետվություններում սույն հավելվածով սահմանված դրույթների անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում լիցենզավորող մարմնի կողմից ծանուցում է

ուղարկվում հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում նշված անհամապատասխանությունները շտկելու համար:

6. Սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված դեպքում, եթե այդ մասին հետադարձ կապի միջոցներով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվություն ներկայացրած քաղաքաշինության գործունեության սուբյեկտը չի վերացնում առկա անհամապատասխանությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր կամ լրացուցիչ պարզաբանումներ հաշվետվությունը համարվում է չներկայացված:

7. Լիցենզավորող մարմին ներկայացված հաշվետվությունում քաղաքաշինության գործունեության սուբյեկտի կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում հաշվետվություն ներկայացրած անձը կարող է ներկայացնել ճշգրտված հաշվետվություն: Սույն հավելվածի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի հաշվետվություններից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված:

8. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կամ թույլտվություն ստացած տնտեսվարող սուբյեկտների կողմից հաշվետվություն ներկայացնելու քաղաքաշինական գործունեության տեսակների ձևերը.

| ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՍԱԿԻ ՁԵՎԵՐԸ | |
|---|---|
| 1) Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 1-ի | □ |
| 2) Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 2-ի | □ |
| 3) Շինարարության իրականացում իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 3-ի | □ |
| 4) Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 4-ի | □ |
| 5) Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 5-ի | □ |
| 6) Քաղաքաշինական գործունեության թույլտվություն ստացած օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվող հաշվետվություն՝ համաձայն Ձև 6-ի | □ |

**Ձև 1**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Օբյեկտի հասցեն | Օբյեկտի անվանումը և ռիսկայնության աստիճանն ըստ նախագծային առաջադրանքի (ՃՀԱ) | Օբյեկտի հարկայնությունն ու ընդհանուր մակերեսը | Գործունեության ենթատեսակ (ներ) | Չափման միավորներ/ Վ, Վտ, Ա, Պա, մ, խմ, մ2, | Նախագծային աշխատանքների | | Հեղինակային հսկողության (առկայության դեպքում) | | Կատարված աշխատանքներ ի ընթացք % | | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի արժեքը/ հազ. Դրամ | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի ծածկագիրը և համարը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագիրը կնքելու համար կիրառված գնման ձևը | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված մասնագետների եկամտային հարկի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Պատվիրատուի կողմից հաստատված ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման արձանագրության համարը | Լիցենզավորված կազմակերպության նկատմամբ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկություններ (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը) | Խրախուսանքի վերաբերյալ տեղեկություն (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Պայմանագրի պատշաճ կատարված լինելու վերաբերյալ տեղեկատվություն* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Սկիզբ | Ավարտ | Սկիզբ | Ավարտ | Հաշվետու եռամսյակ | Ընդամենը /աճողական/ | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Հաշվետու ժամանակահատվածում՝

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

Հաշվետվություն ներկայացնելու

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

____________________

ամսաթիվ

Ձև 2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Քաղաքաշինական փաստաթղթեր կազմող կազմակերպություն (ներ) | Լից. N (ներ) | Օբյեկտի վայրը, տեսակը և փորձաքննական աշխատանքներն՝ ըստ ոլորտի /ոլորտների/ | | | Փորձագիտական եզրակացության արդյունքը | Աշխատանքի կատարման ժամկետը | | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի ծածկագիրը և համարը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագրի գումարը/ հազ. Դրամ | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագիրը կնքելու համար կիրառված գնման ձևը | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված մասնագետների եկամտային հարկի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Պատվիրատուի կողմից հաստատված ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման արձանագրության համարը | Լիցենզավորված կազմակերպության նկատմամբ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկություններ (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը) | Խրախուսանքի վերաբերյալ տեղեկություն (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Պայմանագրի պատշաճ կատարված լինելու վերաբերյալ տեղեկատվություն* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Վայրը | Օբյեկտի տեսակը | Ոլորտը /ոլորտները/ | | Սկիզբ | Ավարտ | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հաշվետու ժամանակահատվածում՝ | | | | | | | | | | | | | | | | | | |
| Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

Հաշվետվություն ներկայացնելու

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստացման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

____________________

ամսաթիվ

**Ձև 3**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Շինարարություն իրականացնելու վայրը, օբյեկտի տեսակը և շին. աշխատանքներն՝ ըստ ոլորտի /ոլորտների/ | | | Ընդհանուր շինարարության ծավալը և գումարը | | Շին. թույլտվության N | Շինարարության | | Կատարված աշխատանքներ ի ընթացք % | | Փաստացի աշխատանքների ավարտը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի արժեքը/ հազ. Դրամ | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի ծածկագիրը և համարը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագիրը կնքելու համար կիրառված գնման ձևը | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված մասնագետների եկամտային հարկի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Պատվիրատուի կողմից հաստատված ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման արձանագրության համարը | Լիցենզավորված կազմակերպության նկատմամբ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկություններ (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը) | Խրախուսանքի վերաբերյալ տեղեկություն (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Պայմանագրի պատշաճ կատարված լինելու վերաբերյալ տեղեկատվություն* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Վայրը | Օբյեկտի տեսակը | Ոլորտը /ոլորտները/ | մ, խմ, մ2 | հազ. դրամ | | Սկիզբ | Ավարտ | Հաշվետու եռամսյակ | Ընդամենը /աճողական/ | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Հաշվետու ժամանակահատվածում՝ | | | | |
|---|---|---|---|---|
| Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ | | | | |
| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի բանվորական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | ՀԾՀ |
|---|---|---|
| | | |
| | | |

Տեխնիկական միջոցներ և սարքավորումներ (տեխնիկական անձնագրի, վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի և այլ հիմնավորող փաստաթղթերի պատճենները)

| Անվանում | Համար | Տրման ամսաթիվ |
|---|---|---|
| *տեխնիկական անձնագիր* | | |
| *վարձակալության պայմանագիր* | | |
| *սեփականության վկայական* | | |

Հաշվետվություն ներկայացնելու

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

______________________

ամսաթիվ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից

ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Շինարարություն իրականացնող կազմակերպություն | Լից. N | Շինարարություն իրականացնելու վայրը, օբյեկտի տեսակը և շին. աշխատանքներն՝ ըստ ոլորտի /ոլորտների/ | Շինարարության ծավալը և գումարը | | Խախտումների առկայություն /խախտման բնույթը/ | Տեսչական այցի առկայություն | | Շին. թույլտվության N | Շինարարության սկիզբ, ամիս, տարի | Կատարված աշխատանքների ընթացքը % | | Շինարարության ավարտը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի ծածկագիրը և համարը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագրի գումարը/ հազ. Դրամ | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագիրը կնքելու համար կիրառված գնման ձևը | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված մասնագետների եկամտային հարկի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Պատվիրատուի կողմից հաստատված ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման արձանագրության համարը | Լիցենզավորված կազմակերպության նկատմամբ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկություններ (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը) | Խրախուսանքի վերաբերյալ տեղեկություն (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Պայմանագրի պատշաճ կատարված լինելու վերաբերյալ տեղեկատվություն* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մ, խմ, մ2, | հազ. դրամ | | ամիս, ամսաթիվ | արձանագրություն | | | Հաշվետու եռամսյակ | Ընդամենը /աճողական/ | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Հաշվետվու ժամանակահատվածում՝

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

Տեխնիկական միջոցներ և սարքավորումներ (տեխնիկական անձնագրի, վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի և այլ հիմնավորող փաստաթղթերի պատճենները)

| Անվանում | Համար | Տրման ամսաթիվ |
|---|---|---|
| *տեխնիկական անձնագիր* | | |
| *վարձակալության պայմանագիր* | | |
| *սեփականության վկայական* | | |

Հաշվետվություն ներկայացնելու

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

______________________

ամսաթիվ

**Ձև 5**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Հետազննության վայրը, շենքի կամ կառուցվածքի անվանումը, ռիսկայնության աստիճանը, նշանակությունը (կադաստրային ծածկագիրը) | Նախագծի տեսակը (անհատական կամ տիպային) | Մուտքերի թիվը | Շենքի շինությունների (բնակարանների և ոչ բնակելի տարածքների) թիվը | Բազմաբնակարան շենքի կառավարման ձևը (համատիրություն, լիազորագրային, հավատարմագրային, համայնքի ղեկավարի կողմից կառավարում) | Վերջին վերանորոգման կամ հիմնանորոգման կամ վերակառուցման տարեթիվը | Շենքի՝ պատմամշակութային հուշարձան հանդիսանալու մասին տեղեկություն | Կոնստրուկտիվ համակարգը, հարկայնությունը և մակերեսը | Տեխնիկական վիճակի գնահատա-կանը (վնասվածության աստիճանը) | Աշխատանքի կատարման ժամկետը | | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի գնման պայմանագրի ծածկագիրը և համարը | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագրի գումարը/ հազ. Դրամ | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի պայմանագիրը կնքելու համար կիրառված գնման ձևը | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված մասնագետների եկամտային հարկի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Հաշվետու ժ/կաշրջանին նախորդող 1 տարվա կտրվածքով կատարված աշխատանքների համար ՀՀ պետական բյուջե վճարված տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտի հանրագումարի չափը (ՀՀ դրամ) | Պատվիրատուի կողմից հաստատված ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման արձանագրության համարը | Լիցենզավորված կազմակերպության նկատմամբ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ տեղեկություններ (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը) | Խրախուսանքի վերաբերյալ տեղեկություն (տեսակը, այն տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) | Պայմանագրի պատշաճ կատարված լինելու վերաբերյալ տեղեկատվություն* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | Սկիզբ | Ավարտ | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Հաշվետու ժամանակահատվածում՝

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

**Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ**

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

**Տեխնիկական միջոցներ և սարքավորումներ** (տեխնիկական անձնագրի, վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի և այլ հիմնավորող փաստաթղթերի պատճենները)

| Անվանում | Համար | Տրման ամսաթիվ |
|---|---|---|
| *տեխնիկական անձնագիր* | | |
| *վարձակալության պայմանագիր* | | |
| *սեփականության վկայական* | | |

**Հաշվետվություն ներկայացնելու**

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

____________________

ամսաթիվ

Ներկայացման ժամկետը՝ ամեն եռամսյակին հաջորդող մինչև ամսի 20-ը ներառյալ:

*** - Պայմանագրի կատարումը համարվում է պատշաճ կարգով կատարված, եթե պայմանագիրը, ներառյալ դրա առանձին մասերը, կատարվել են պայմանագրով նախատեսված պայմաններին և կնքման պահին ի սկզբանե սահմանված ժամկետներին համապատասխան, ներառյալ եթե պայմանագրի կատարման արդյունքն**

ընդունելիս չի առաջացել որակի ապահովման հետ կապված խնդիրներ (շտկումներ, թերություններ, ժամկետների երկարաձգումներ, տույժերի և տուգանքների գանձում):

Ձև 6

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

քաղաքաշինական գործունեության թույլտվություն ստացած օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ներկայացվող

| Հ/Հ | Պատվիրատու | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի անվանումը | Փոխկապակցված Այլ կազմակերպությունների Լից. N | Քաղաքաշինական գործունեության օբյեկտի ռիսկայնության աստիճանը և իրականացված աշխատանքներն՝ ըստ տեսակի և ենթատեսակի | Պատասխանատու մասնագետի (ների) Ա.Ա.Հ., ՀԾՀ անձնագրային տվյալներ/որակավորման աստիճան | Աշխատանքների ծավալը և գումարը | | ՀՀ համայնքի կամ այլ պետական մարմինների կողմից տրված թույլտվության | | Քաղաքաշինական գործունեության սկիզբ, ամիս, տարի | Կատարված աշխատանքների ընթացք % | | Աշխատանքների ավարտը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մ, խմ, մ2, | հազ. դրամ | համար | ամսաթիվ | | Հաշվետու եռամսյակ | Ընդամենը /աճողական/ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |

Հաշվետու ժամանակահատվածում՝

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի ինժեներատեխնիկական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | Պաշտոն | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի պատասխանատու անձ

| Անուն | Ազգանուն | Հավաստագրի սերիա, համար |
|---|---|---|
| | | |
| | | |

Լիցենզավորված քաղաքաշինական սուբյեկտի բանվորական անձնակազմ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն | ՀԾՀ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

Տեխնիկական միջոցներ և սարքավորումներ (տեխնիկական անձնագրի, վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի և այլ հիմնավորող փաստաթղթերի պատճենները)

| Անվանում | Համար | Տրման ամսաթիվ |
|---|---|---|
| *տեխնիկական անձնագիր* | | |
| *վարձակալության պայմանագիր* | | |
| *սեփականության վկայական* | | |

Հաշվետվություն ներկայացնելու

| Տարեթիվ | Եռամսյակ |
|---|---|
| | |

| | |
|---|---|
| **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը օրենքով սահմանված կարգով իմ անձնական տվյալների մշակման, ինչպես նաև հաշվետվության մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար:**<br>**Տեղեկացված եմ, որ անհրաժեշտ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հաշվետվության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին և դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):**<br>**Սույնով հայտարարում եմ, որ հաշվետվության մեջ նշված և կից փաստաթղթերում առկա տեղեկությունները հավաստի են:** | ☐ |

____________________

ամսաթիվ

**Հավելված N 2**
**ՀՀ քաղաքաշինության**
**կոմիտեի նախագահի**

**2024 թվականի** դեկտեմբերի 12**-ի N** 26**-Ն**

**հրամանի**

**Պայմանագիր Ձև 1**

# ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱԶՄՈՂ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«_____» ______________ 20 թ.

Կողմերը պայմանագրի շրջանակներում ընդունում են տերմինների հետևյալ սահմանումները՝
Քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտ (այսուհետ՝ Գործատու) ________________________________________
գրանցված __________________, գրանցման N _________________, վկայական N _______________
Տնօրեն՝ կազմակերպության (սուբյեկտի) գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձ,
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
(անունը, ազգանունը, անձնագրի համարը, սերիան, երբ և ում կողմից է տրված)

Պայմանագիր՝ սույն պայմանագիրը.

Գործատուն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ __________________----ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և պատասխանատու մասնագետ (այսուհետ՝ Մասնագետ) ____________________________________________ը, մյուս կողմից, (Գործատուն և Մասնագետը միասին հիշատակվելու դեպքում, այսուհետ՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին՝ այսուհետ Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրով Մասնագետը պարտավորվում է մատուցել ________________________________________________________ ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Գործատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների համար:
2. Մասնագետը ենթակա է անմիջապես տնօրենին:
3. Սույն պայմանագիրը կնքվում է _________________________ ժամկետով:
4. Մասնագետն աշխատանքի է ընդունվում որպես ______________________________________ և պարտավորվում է կատարել սույն պայմանագրով նախատեսված գործառույթները:
5. Մասնագետը գործատուի մոտ աշխատում է ________________________________________
(հիմնական, համատեղության կարգով)

6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի նախաձեռնությամբ՝ կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Գործատուն իրավունք ունի՝

1) ոչ պետական վերահսկողություն իրականացնել Մասնագետի կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ.

2) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից ձեռք բերելու նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ, օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանների և կառուցապատողի կողմից տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութեր.

3) նախագծային փաստաթղթերի կազմում ընդգրկելու լրացուցիչ նյութեր.

4) մասնակցելու «Քաղաքաշինության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված նախագծի համաձայնեցման փուլերին.

5) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

8. Գործատուն պարտավոր է՝

1) Մասնագետին ապահովել պայմանագրով որոշված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը.

2) ստեղծել Մասնագետի աշխատանքային գործունեության նորմալ պայմաններ, Մասնագետին ապահովել համապատասխան նյութերով, փաստաթղթերով ու տեղեկատվությամբ, ցուցաբերել անհրաժեշտ իրավաբանական, տեխնիկական, տնտեսական և կազմակերպչական աջակցություն.

3) կատարած աշխատանքի համար Մասնագետին վարձատրել Պայմանագրով սահմանված չափերով ու կարգով, խրախուսել Մասնագետի արդյունավետ և բարեխիղճ աշխատանքը.

4) ՀՀ աշխատանքային օրենսգրքով և Պայմանագրով սահմանված կարգով Մասնագետին տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ.

5) աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում Մասնագետին ծանոթացնել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին.

6) կատարել օրենսդրության և քաղաքաշինական փաստաթղթերի նախագծման թույլտվության պահանջները.

7) «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով ապահովել քաղաքաշինական փաստաթղթեր մշակող Մասնագետի հեղինակային իրավունքները աշխատանքային պայմանագրով նման պահանջի առկայության դեպքում.

8) պահպանել քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները.

9) ապահովել քաղաքաշինական գործունեության օբյեկտներում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան գործելակարգով սահմանված աշխատանքների և ծառայությունների կատարումը.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ.

11) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

9. Մասնագետն իրավունք ունի՝

1) օրենքով սահմանված կարգով իր կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան իրականացնելու լիցենզավորման ենթակա և (կամ) շինարարության թույլտվություն չպահանջող քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն.

2) ներկայացնելու ապացուցողական հիմնավորումներ, որոնք նախատեսված չեն քաղաքաշինական փաստաթղթերով.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտին և մեթոդաբանությանը վերաբերող հարցերի վերաբերյալ ազատ արտահայտելու մասնագիտական կարծիք.

4) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման տեսակներին.

5) դիմելու սույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողով՝ իր կարծիքով այլ Մասնագետի կողմից մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքում.

6) Ստանալ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվություն.

7) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

10. Մասնագետը պարտավոր է՝

1) քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջներով.

2) պահպանել օրենսդրության պահանջները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել, լրացնել, վարել և շրջանառել քաղաքաշինական փաստաթղթերը և անձնական ստորագրությամբ վավերացնել դրանք.

4) օրենքով սահմանված դեպքերում քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել գաղտնիք պարունակող տեղեկությունները.

5) կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները և հմտությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

6) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան.

7) հավաստագրված մասնագետների գրանցամատյաններում ամրագրված իր տվյալների փոփոխությունների մասին 15-օրյա ժամկետում հայտնել քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնին (բացառությամբ գործող տվյալների բազաներից ինքնաշխատ եղանակով տվյալների թարմացման դեպքերի).

8) Մասնագետը միայն Գործատուի թույլտվությամբ կարող է Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այլ անձի հանձնարարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը.

9) պահպանել Մասնագետի էթիկայի կանոնները.

10) կատարել օրենքով սահմանված այլ պարտավորություններ:

## 3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Սույն Պայմանագրով Մասնագետի աշխատավարձի չափը կազմում է ամսական ________________________________ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, որը Գործատուն պարտավոր է վճարել Մասնագետին ոչ ուշ, քան մինչև հաջորդ ամսվա 15-ը: Գործատուն կարող է բարեխիղճ և լավ աշխատանքի դիմաց Մասնագետին վճարել պարգևավճար:

## 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Մասնագետը համարվում է նյութական պատասխանատու անձ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի և նյութական պատասխանատվություն է կրում սույն օրենսգրքի 238-րդ հոդվածին համապատասխան: Եթե վնասը գերազանցում է հատուցման նախատեսված

գումարի չափը, ապա Գործատուն իրավունք ունի նյութական պատասխանատվության հարցը լուծելու դատական կարգով:
13. Մասնագետը համարվում է լիակատար նյութական պատասխանատու անձ, եթե նրա հետ կնքվում է համապատասխան լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիր: Լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիրը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս:
14. Սույն պայմանագրի կապակցությամբ վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի, երբ Գործատուն իրավունք ունի միակողմանի փոփոխել Պայմանագիրը:
16. Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, երկուական հավասարազոր օրինակներից: Պայմանագրի մեկ օրինակը տրվում է Մասնագետին, իսկ մյուսը պահվում է Գործատուի մոտ՝ սահմանված կարգով գրանցվելով Գործատուի աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գործատու՝**

**Մասնագետ՝**

______________________
Ստորագրություն

______________________
Ստորագրություն

## ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«_____» ______________ 20 թ.

Կողմերը պայմանագրի շրջանակներում ընդունում են տերմինների հետևյալ սահմանումները՝ Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտ (այսուհետ՝ Գործատու)
______________________________________________________________________
գրանցված __________________, գրանցման N _________________, վկայական N ________________
Տնօրեն՝ կազմակերպության (սուբյեկտի) գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձ,
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
(անունը, ազգանունը, անձնագրի համարը, սերիան, երբ և ում կողմից է տրված)

Պայմանագիր՝ սույն պայմանագիրը.

Գործատուն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ ___________________----ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և պատասխանատու մասնագետ (այսուհետ՝ Մասնագետ) __________________________-------------------------ը, մյուս կողմից, (Գործատուն և Մասնագետը միասին հիշատակվելու դեպքում, այսուհետ՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին՝ այսուհետ Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրով Մասնագետը պարտավորվում է մատուցել __________________________________________________ ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Գործատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների համար:
2. Մասնագետը ենթակա է անմիջապես տնօրենին:
3. Սույն պայմանագիրը կնքվում է _______________________ ժամկետով:
4. Մասնագետն աշխատանքի է ընդունվում որպես ______________________________________ և պարտավորվում է կատարել սույն պայմանագրով նախատեսված գործառույթները:
5. Մասնագետը գործատուի մոտ աշխատում է ______________________________________
(հիմնական, համատեղության կարգով)

6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի նախաձեռնությամբ՝ կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Գործատուն իրավունք ունի՝

1) ոչ պետական վերահսկողություն իրականացնել Մասնագետի կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ.

2) քաղաքաշինական փաստաթղթերի և մեթոդաբանության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տրամադրելու.

3) քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու համար կառուցապատողից, ինչպես նաև նախագիծը կազմող աշխատանքների պատասխանատու կապալառուից պահանջելու ներկայացված ճարտարապետաշինարարական լուծումները հիմնավորող՝ «Քաղաքաշինության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված փաստաթղթեր.

4) նյութերը լրակազմված չլինելու դեպքում դրանք վերադարձնելու պատվիրատուին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու առաջարկով.

5) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

8. Գործատուն պարտավոր է՝

1) Մասնագետին ապահովել պայմանագրով որոշված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը.

2) ստեղծել Մասնագետի աշխատանքային գործունեության նորմալ պայմաններ, Մասնագետին ապահովել համապատասխան նյութերով, փաստաթղթերով ու տեղեկատվությամբ, ցուցաբերել անհրաժեշտ իրավաբանական, տեխնիկական, տնտեսական և կազմակերպչական աջակցություն.

3) կատարած աշխատանքի համար Մասնագետին վարձատրել Պայմանագրով սահմանված չափերով ու կարգով, խրախուսել Մասնագետի արդյունավետ և բարեխիղճ աշխատանքը.

4) ՀՀ աշխատանքային օրենսգրքով և Պայմանագրով սահմանված կարգով Մասնագետին տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ.

5) աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում Մասնագետին ծանոթացնել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին.

6) փորձաքննության ընթացքում ապահովել փորձագետների մասնակցությունը քաղաքաշինական գործունեության օբյեկտի ուսումնասիրությանը, վերլուծությանը և գնահատմանը.

7) հավաստել քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծային լուծումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

8) հրաժարվել իր կազմած նախագծերի փորձաքննությունն իրականացնելուց.

9) պահպանել քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները.

